ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 հունիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

88
(2938)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄՐՑՈՒՅԹԸ ԴԱՐՁՐԻՆ ՀԱՃՈՅԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՑ

Հունիսի 1-ին «Երեմյան Փրոջեքթս»-ը «Սիզընս» այգում մրցույթ-միջոցառում էր կազմակերպել, որի ընթացքում 1 ժամում 6000 մարդ մեկ բաժակ կաթ պետք է խմեր՝ «Գինեսի» ռեկորդի գրանցման համար:

Միջոցառման դեմքը բլոգեր, երգիչ Կարո Այրումյանն էր, որն այդ օրը նաեւ համերգային ծրագրով հանդես եկավ: Կարելի է ասել՝ միջոցառմանը հավաքված մարդիկ ոչ թե կաթ խմելու, կամ «Երեմյան Փրոջեքթս»-ի համար էին այդ օրը հավաքվել, այլ հենց սիրված բլոգերի համեգին մասնակցելու. համենայնդեպս, մեր հարցումները դա ցույց տվեցին:

Բայց, արի ու տես, «Երեմյան Փրոջեքթս»-ը սիրված բլոգերի անվան հաշվին մրցույթ է կազմակերպում, մեծ թվով մարդիկ հավաքում, իսկ հետո հաղթանակը նվիրում է էկոնոմիկայի նախարարությանը:

Ինչպես ավելի ուշ հայտնի դարձավ՝ «Երեմյան Փրոջեքթս»-ի գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանը հունիսի 24-ին հանդիպել էր էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին եւ նրան նվիրել 1 ժամում ամենաշատ բաժակներով կաթի մատուցման համար սահմանած՝ «Գինեսի» համաշխարհային ռեկորդը հավաստող վկայականը:

Այսինքն՝ «Երեմյան Փրոջեքթս»-ը ոչ թե իր, այլ Կարո Այրումյանի հեղինակության հաշվին ձեռք բերած մրցանակը նվիրեց իշխանություններին. հավանաբար, քաղաքականացրեց այդ «անմեղ» ակցիան, որպեսզի արտոնություններ ստանա:

Թե որքանով է արդար, թերեւս հանրությունը կդատի:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով պարզաբանում խնդրեց նաեւ «Երեմյան Փրոջեքթս»-ի PR ղեկավար Անահիտ Գեւորգյանից, թե ինչու է որոշվել վկայականը նվիրել էկոնոմիկայի նախարարությանը:

Վերջինս էլ նշեց. «Ռեկորդը երկրինն է, նվիրել ենք Հայաստանին՝ի դեմս էկոնոմիկայի նախարարությանը: Նախորդ միջոցառման ժամանակ էլ ռեկորդը նվիրել էինք Երեւանին՝ի դեմս քաղաքապետարանի: Այսինքն՝ ճիշտ չի լինի, որ ռեկորդը մեզ մոտ պահենք, դրա համար նվիրում ենք երկրին»:

Իսկ ինչու չեն նվիրել Կարո Այրումյանին, որի համար հավաքվել էին երեխանները՝ կաթ խմելու:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի հունիսի 20-ին: Մինչեւ փոխնախարար դառնալը՝ Պողոսյանը 2019 թվականի մարտից մինչեւ դեկտեմբեր եղել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականը, ապա 2019-2022 թվականներին՝ Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը: Պողոսյանը վարչական շրջանի ղեկավարի պաշտոնից ազատվեց այն բանից հետո, երբ վերահսկողության վարչությունը սկսեց ստուգումներ իրականացնել Կենտրոնի թաղապետարանում: Քաղաքապետարանից դեռ այն ժամանակ այս թեմայով «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցել էին, որ սա պարզապես ստուգում է, այնինչ այն վատ ավարտ ունեցավ Ավետ Պողոսյանի համար: Վատ ավարտ, սակայն նոր եւ ավելի յուղալի պաշտոնի սկիզբ: Այսպիսով՝ ուսումնասիրենք այժմ ԲՏԱ փոխնախարար Ավետ Պողոսյանի ունեցվածքը: 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն՝ Պողոսյանը չի հայտարարագրել որեւէ անշարժ գույք, սակայն տրանսպորտային միջոցների հարցում շռայլ է գտնվել: Պողոսյանը 2023 թվականի տարեսկզբին ունեցել է մեկ՝ 1980 թվականի արտադրության VAZ մակնիշի ավտոմեքենա, տվյալ տարվա ընթացքում ձեռք է բերել 2 ավտոմեքենա 2 մլն դրամ արժողությամբ, 2005 թվականի արտադրության, PORSCHE մակնիշի մեքենա եւ 18 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ 2019 թվականի արտադրության KIA մակնիշի մեքենա, որը ներկրված է եղել ԱՄՆ-ից: Տվյալ տարվա ընթացքում փոխնախարարը 2 մլն դրամով վաճառել է PORSCHE մակնիշի մեքենան, արդյունքում՝ տարեվերջում ունեցել է 2 մեքենա՝ KIA եւ VAZ մակնիշների:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Ադիկոլ Փաշինյանը որոշել է «հանրության մեջ դուրս գալ»: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյանը որոշել է ամեն շաբաթ-կիրակի մարզեր գնալ: Ըստ կառավարության մոտ կանգնած մեր աղբյուրի՝ շատ ոգեւորված է հետ եկել Սյունիքի մարզից, որտեղ մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը ջանք ու եռանդ չէր խնայել կազմակերպելու այնպիսի հանդիպումներ, որոնցում Փաշինյանն իրեն կոմֆորտ կզգա, ու ահա դա է պատճառը, որ հայրենի իշխանության տարբեր ներկայացուցիչներ, մարզպետներ ու համայնքապետեր ամեն բան անում են՝ մարզում բնակիչների հետ անթերի հանդիպումներ կազմակերպելու համար, որտեղ բոլորը ջերմ խոսքեր կասեն Փաշինյանին, կհամբուրեն ու կասեն, որ ինքը պետք է մնա իշխանության ղեկին: Փաշինյանի՝ մարզեր գնալու բուն նպատակը նաեւ ընդդիմությանը ցույց տալն է, թե ժողովուրդը իր կողքին է, ու ինքը մինչեւ 2026 թվականը վարչապետի աթոռին է մնալու: ՀՀ վարչապետի տրամադրությունը, ըստ մեր աղբյուրների, բարձր է, քանի որ իրեն զեկուցած տեղեկությունների համաձայն՝ իշխանության փոփոխություն այս պահին իրագործելի չէ: Ի դեպ, դեռ հստակ չէ, թե որ մարզ կգնա Փաշինյանը, քանի որ նա իր այցերը գաղտնի է պահում ու վերջին պահին է հայտարարում, որ պատրաստվեն, ու մեկնեն մարզ:

Իշխանությունները արցախից բռնի տեղահանված արցախցիներին շահագրգռում, համոզում են քաղաքական ակտիվություն չցուցաբերել, որեւէ դեպքում չմասնակցել «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման կազմակերպած հանրահավաքներին ու ակցիաներին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վերջին շրջանում ՔՊ-ականները տարբեր վարչական շրջաններում ու մարզերում փակ հանդիպումներ են ունենում Արցախից բռնի տեղահանվածների հետ ու իբրեւ սոցիալական ծրագրերի առնչությամբ հարցեր քննարկում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ բացի սոցիալական հարցերից, իշխանականները ձեռքի հետ էլ արցախցիներին հասկացնում են, որ եթե ուզում են օգտվել սոցիալական այդ ծրագրերից, ապա պետք է քաղաքական չեզոքություն դրսեւորեն, չքննադատեն ՔՊ-ին ու չխառնվեն քաղաքական գործընթացներին, մասնավորապես «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հրավիրած հանրահավաքների մասին է խոսքը, որին, ինչպես գիտենք, նաեւ մեծ թվով արցախցիներ են մասնակցում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՍԱՆԱԳԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԶՐՈՒՅՑ

«ՇԱՐԺՄԱՆ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է»

ArmLur.am-ի տաղավարում հյուրընկալվել է «Ազգային ժողովրդավարական բեւեռ» շարժման անդամ Ժիրայր Սեֆիլյանը:

Ժիրայր Սեֆիլյանի հետ քննարկել ենք «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության մասին, ինչպես նաեւ անդրադարձել ենք շարժման բացերից, հաջորդիվ սպասվող իրադարձություններից:

-Պարոն Սեֆիլյան, իշխանությանը, կարծես թե, հաջողվեց հասնել նրան, որ փողոցային պայքար այսօր չկա, քաղաքացիները այլեւս փողոցային ակցիաներ չեն իրականացնում, ո՞րն էր պատճառը, որ իշխանությունը կարողացավ հասնել սրան:

-Շարժումները ունենում են ելեւէջներ, եւ քանի որ հունիսի 12-ը կարեւոր օր էր, պետք չէր բացառել նման փոփոխություն այդ օրվանից հետո: Իմ տպավորությամբ, քանի որ Բագրատ սրբազանը որդեգրում է անցնցում եւ առաւելեւս՝ անարյուն տարբերակը փոփոխությունների, այդ հանգամանքը գործող թուրքաեւնթակա իշխանությունները օգտագործում են, եւ պատրաստ են ամեն տեսակի վայրագությունների դիմելու: Բայց սա չի նշանակում, որ շարժումը կանգ է առել, կամ որեւէ օր ժողովուրդը նորից հրապարակը չի լցնի. ուստի կարող ենք ասել՝ մարտավարական շարժեր են տեղի ունենում գետնի վրա, եւ ես մեծ հաշվով լավատեսորեն եմ տրամադրված: Բագրատ սրբազանի անձի հայտնվելը օգտակար երեւույթ էր այն իմաստով, որ երկար տարիներ մեր քաղաքական դաշտում նման համախմբում տեղի չէր ունեցել՝ հայտնի պատճառներով, կուսակցություն կոչեցյալները այդպես էլ երկխոսության մշակույթը չէին ունեցել, առաջնային խնդրի, առաջնային գաղափարի օրակարգի մշակույթը չէր ձեւավորվել, ու այդ պատճառով համախմբումների էլ ականատես չէինք լինում, սակայն Բագրատ սրբազանի հայտնվելով՝ այդ հնարավորությունն առկա է այժմ, դա երեւաց այս 40 օրվա մեջ: Հուսով ենք՝ առաջիկա օրերին կկատարվեն որոշ ուղղումներ ու շարժումն ավելի հաստատակամ առաջ կգնա:

-Ի՞նչ ուղղումների մասին է խոսքը, պարոն Սեֆիլյան:

-Խոսքը վերաբերում է շարժման առաջնորդի առաջ քաշած գաղափարներին, նպատակներին, արտաքին եւ ներքին թիրախավորումներին: Բնականաբար, տարբեր ժամանակներում խոսույթի տարբեր առաջնահերություններ կարող են դրվել, եւ շատ կարեւոր է, որ նաեւ ներքին համախմբման ուղղությամբ աշխատանքներ տարվեն: Ինչպես սրբազանն ինքն է ասում՝ շարժումը ավելի ամրացնելու կարիք կա, տարբեր ուժեր պետք է հասկանան, որ բառի բուն իմաստով որեւէ հավակնություններ չպետք է ունենան: Ինչպես սրբազանն է ասել՝ չակնկալիքների շարժում է սա: Մեզ մնում է համախմբվել, Փաշինյանին հեռացնել, եւ դրանից հետո քաղաքական բանավեճերի միջոցով գնալ առաջ. բայց քանի Փաշինյանը վարչապետ է, անիմաստ է այլ քայլերի մասին խոսելը:

Շատ կարեւոր է, որ այս ընթացքում շարժման ղեկավարությունը կարողանա իր խոսույթով մեր ժողովրդի այն շերտի կասկածները փարատել, որոնք տակավին կասկածով են մոտենում այս ամենին, տարբեր ուժերի ականջներ են տեսնում շարժման մեջ. այս ժամանակը պետք է օգտագործվի նաեւ փարատելու այդ կասկածները: Լինելով այս ամենի մեջ՝ես իմ հերթին կարող եմ մեր ժողովրդին վստահեցնել, որ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման թիկունքում միայն ժոովուրդն է կանգնած, եւ որեւէ արտաքին կամ ներքին ուժեր չկան, որ ղեկավարում են այս այն:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՎԱՐՏՈՒՆ ՏԵՍՔԸ

Հայաստանը պատրաստ է 1 ամսում ավարտուն տեսքի բերել խաղաղության պայմանագրի տեքստը եւ ստորագրել այն: Այս մասին երեկ՝ հունիսի 27-ին, Տալլինում հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանն Էստոնիայի ԱԳ նախարար Մարգուս Ցահկնայի հետ համատեղ ասուլիսում:

«Հայաստանն ու Ադրբեջանը բանակցում են: Մենք գրեթե վերջնական տեսքի ենք բերել խաղաղության պայմանագրի նախագծի տեքստը: Հայաստանը պատրաստ է մեկ ամսում ամբողջովին ավարտուն տեսքի բերել խաղաղության պայմանագրի տեսքտը եւ պայմանագիրը ստորագրել:

Չեմ կարող ասել, որ մեր ադրբեջանցի գործընկերներից դրական արձագանք ենք տեսել այս առաջարկին՝ խաղաղության պայմանագիրը մեկ ամսում ստորագրելուն...

Ես հավատում եմ, որ մենք կատարելու ենք այն՝փակելով Հարավային Կովկասում հակամարտության էջն ու խաղաղություն ենք բերելու տարածաշրջանում, ես հավատում եմ, որ այս խաղաղությունը շահավետ է լինելու տարածաշրջանի երկրների ու դրանց քաղաքացիների համար»,- ասաց Միրզոյանը:

ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ Է

«Ես ամաչում եմ, որ մի երկրի քաղաքացի եմ, որի քաղաքացիները Բաքվի բանտերում են»:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է «Ապրելու երկիր» կուսակցության հիմնադիր Մանե Թանդիլյանը:

«2021թ. հունիսյան մի երեկո Ռուբեն Վարդանյանի հետ հանդիպման էինք: Հանդիպման ժամանակ տեղեկացրեցին, որ Ռուբենին շնորհվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Բառերով հնարավոր չէ նկարագրել նրա հպարտությունը. Ես Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

Օրեր անց, անձնագիրը ձեռքին Ռուբենը ուղերձով դիմեց հայ ժողովրդին՝որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Ռուբեն Վարդանյանը թերեւս մեր ժամանակների աշխարհում Հայաստանի Հանրապետության ամենահայտնի քաղաքացին է:

Ես հպարտ եմ, որ մի երկրի քաղաքացի եմ, որի քաղաքացի է նաեւ Ռուբեն Վարդանյանը:

Բայց ես ամաչում եմ, որ մի երկրի քաղաքացի եմ, որի քաղաքացիները Բաքվի բանտերում են», - գրել է նա:

«ՀԱՅԱՔՎԵ»-Ն ՀԱՂՈՐԴՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ

«Հայաքվե» նախաձեռնության անդամները հաղորդում կներկայացնեն ՀՀ գլխավոր դատախազություն՝ հունիսի 12-ին Բաղրամյան եւ Դեմիրճյան փողոցների խաչմերուկում բողոքի ակցիայի ընթացքում ոստիկանական գործողությունների վերաբերյալ:

«Հաղորդում ենք ներկայացնելու հունիսի 12-ին ԱԺ շենքի մոտ տեղի ունեցած ակցիայի ընթացքում ոստիկանների բռնությունների վերաբերյալ, որոնք պարունակում են քրեական օրենսգրքով պատժելի արարքներ: Այս մասով հաղորդում ենք ներկայացնելու Դատախազություն»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց նախաձեռնության անդամ Մենուա Սողոմոնյանը:

Հիշեցնենք, որ հունիսի 12-ին ԱԺ-ի շենքի մոտ բախումներ սկսվեցին ոստիկանների եւ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման անդամների ու կողմնակիցների միջեւ: Ոստիկանությունը լուսաձայնային նռնակներ կիրառեց, ինչի հետեւանքով 101 անձ վնասվածք ստացավ, այդ թվում՝ ոստիկաններ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՍՐԲԱԶԱՆԸ՝ ՊԵՏԴԵՊԻ ԶԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

«Կոլումբոսից առաջ էլ էինք մենք քաղաքական դիսկուրսներով զբաղված». «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտարարել է Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը՝ անդրադառնալով ԱՄՆ Պետդեպարտամենտի հրապարակած զեկույցին:

Ավելի վաղ ԱՄՆ Պետդեպարտամենտը հրապարակել էր աշխահի շուրջ 200 երկրներում, ներառյալ՝ Հայաստանում կրոնական ազատությունների մասին տարեկան զեկույցը: Զեկույցում Հայաստանի վերաբերյալ բաժնում նշվում է եկեղեցի-կառավարություն հարաբերությունների լարվածության, կրոնական փոքրամասնությունների հետ կապված խնդիրների եւ այլ հարցերի մասին, գրում է «Ամերիկայի ձայն»-ը:

Ըստ զեկույցի՝ Հայաստանի Սահմանադրությունն արգելում է կրոնի վրա հիմնված խտրականությունը եւ սահմանում է կրոնական կազմակերպությունների եւ պետության տարանջատում:

«Այն ճանաչում է Հայ Առաքելական Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը Հայաստանի ժողովրդի հոգեւոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում: Կառավարության եւ Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչները, այդ թվում՝ Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդ, կաթողիկոս Գարեգին Բ-ն եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակային քննադատական հայտարարություններ են արել միմյանց հասցեին՝ կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում կառավարության գործունեության եւ քաղաքականության մեջ Հայ Առաքելական Եկեղեցու ներգրավվածության հետ»,- ասվում է զեկույցում:

Ըստ զեկույցի՝ 2023 թ. ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորականները շարունակել են առանց սահմանափակումների մասնակցել քաղաքացիական դիսկուրսին, իսկ Գարեգին Բ կաթողիկոսը՝ կոչեր հնչեցնել վարչապետ Փաշինյանի հրաժարականի մասին:

«Սեպտեմբերի 19-20-ը՝ Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ռազմական գործողություններից եւ Լեռնային Ղարաբաղից գրեթե բոլոր էթնիկ հայերի հեռացումից հետո, Հայ Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսաց հավաքը հոկտեմբերի 3-ին հայտարարություն է տարածել՝ քննադատելով Հայաստանի կառավարության վերաբերմունքը ստեղծված իրավիճակի հանդեպ», - նշված է Պետդեպի զեկույցում: Այն շեշտում է՝ չնայած Հայ Առաքելական Եկեղեցու առարկություններին՝ 2023 թ. ուսումնական տարվա ընթացքում իշխանությունները սկսեցին աստիճանաբար հանել «Հայ Առաքելական Եկեղեցու պատմություն» դասընթացը պարտադիր դպրոցական ծրագրից՝ փոխարենն այն ներառելով համապատասխան պատմական բովանդակություն ունեցող հայագիտական ավելի լայն ուսումնական ծրագրում:

ԽՈՄՆԱԿԻ ԱՋԱՏՄԱՆ «ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ»

Հունիսի 21-ին ՀՀ ԱԺ նախագահի խոսնակ Նելլի Ղուլյանը գրել էր. «Դադարեցնում եմ աշխատանքս՝ որպես ԱԺ նախագահի մամուլի քարտուղար՝ այլ աշխատանքի անցնելու նպատակով: Որպես 2018 թ. հեղափոխությունից հետո ՀՀ վերադարձած հայ՝ինձ համար մեծ պատիվ էր ծառայել պետությանը, որը շարունակելու եմ անել հետայսու եւ միշտ: Շնորհակալություն լրագրող գործընկերներիս արդյունավետ համագործակցության համար: Շուտով կհանդիպենք», - հավելել էր նա:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նելլի Ղուլյանի աշխատանքից հեռանալն այլ՝խոր արմատներ ունի, եւ պատճառը ոչ այլ ինչ է, քան ԱԺ ներքին ճնշումները: Պատճառներից մեկը Նելլի Ղուլյանի եւ Հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության ոչ հարթ հարաբերություններն են եղել եւ, կարճ ասած, Նելլի Ղուլյանի «գլխին սարքել են»:

«Ժողովուրդ» օրաթերի տեղեկություններով՝Նելլի Ղուլյանը մամուլի այն խոսնակներից է եղել, ով մտերիմ է եղել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ այնքան, որ Ալեն Սիմոնյանն անգամ Ղուլյանի անձնական հեռախոսազանգերին է պատասխանել: Հենց սա էլ դուր չի եկել Նելլի Ղուլյանի «թշնամիներին», որի արդյունքում ԱԺ նախագահի խոսնակը լքել է պաշտոնը:

Քիչ առաջ հայտնի դարձավ, որ Ալեն Սիմոնյանի հրամանագրով Մովսես Հարությունյանը նշանակվել է ՀՀ ԱԺ նախագահի օգնական: Մովսես Հարությունյանը հայտնի դարձավ հեղափոխությունից հետո, երբ մասնակցում եւ սատարող ստատուսներ էր գրում հեղափոխության մասին: Ինչպես ԱԺ ՔՊական շատ պատգամավորներ իշխանության սրտին հաճո ստատուսներ գրելով պաշտոն ստացան, այնպես էլ Մովսես Հարությունյանն է ձգտում ստատուս գրելու հաշվին առաջ գնալ:

ԻՐԱՆՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ՊԱՂԵՍՏԻՆԻ ՃԱՆԱՉՄԱՆԸ

Իրանի արտգործնախարարությունն արձագանքել է Հայաստանի կողմից Պաղեստինի ճանաչմանը:

Պատասխանելով ճանաչման վերաբերյալ հարցին՝ Իրանի ԱԳՆ խոսնակ Նասեր Քանանին նշել է. «Ողջունում ենք Պաղեստինի ժողովրդի օրինական իրավունքներին աջակցելու աշխարհի երկրների դիրքորոշումն ու գործողությունները»:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ

Անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը 8-րդ գումարման Ազգային Ժողով եկել է 2021 թվականի հունիսի 20-ին «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի համամոլեական ընտրական ցուցակով:

Մինչեւ քաղաքական կարիերան Թագուհի Թովմասյանն ակտիվ զբաղվել է լրագրությամբ. սկզբում կամավորական հիմունքներով աշխատել է «Իրավունք» թերթում, ապա դարձել հիմնական աշխատակից, ապա «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող է եղել, այնուհետեւ՝ 2011 թվականից, ստեղծել է իր լրատվամիջոցը՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն ՍՊԸ» լրատվական հոլդինգը: ԱԺ պատգամավորը քաղաքականությամբ սկսել է զբաղվել 2019 թվականից: Ծանոթանալով նրա կողմից ներկայացված տարեկան հայտարարագրին՝ տեղեկացանք, որ, որպես անշարժ գույք, Թագուհի Թովմասյանը հայտարարագրել է 4 գույք՝ 3 բնակարան Երեւանի բազմաբնակարան շենքերում եւ 1 հողամաս Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, որը ժառանգություն է: Բնակարանները ձեռք են բերվել 2012, 2014 եւ 2019 թվականներին: Պատգամավորը տրանսպորտային որեւէ միջոց չունի: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 194 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 3 մլն 300 հազար դրամ եւ 2,5 հազար եվրո: ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 14 մլն 960 հազար դրամ, որից 10 մլն 530 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, իսկ 4 մլն 430 հազար դրամը վճար է «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 40 մլն դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է: Նկատենք, որ նախորդ տարվա համեմատ Թովմասյանի կանխիկ դրամական միջոցները նվազել են՝ 5 մլն 300 հազար դրամից դառնալով 3 մլն 300 հազար դրամ:

Հիշեցնենք, որ Թագուհի Թովմասյանն այն պատգամավորն է, ում իշխող խմբակցությունը ապօրինի զրկեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

Հ. ՀԱՋԻԵՎԻ ԴԺԳՈՀ ⇨ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը մեկնաբանել է ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի՝Ռուսաստանն է հանձնել Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանին, հայտարարությունը:

«Հայաստանի Անվտանգության խորհրդի քարտուղարի հայտարարությունները այդ երկրի նախորդ եւ ներկա ռազմաքաղաքական ղեկավարության մեղքը քողարկելու, այն ուրիշների վրա բարդելու եւ ինքնաարդարացման նպատակ ունեն:

Ցավով պետք է արձանագրենք, որ նման հայտարարությունները Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության մտածելակերպում ռեւանշիստական պատրանքների պահպանման արտացոլումն են, որից խորհուրդ ենք տալիս հրաժարվել», - ասել է Հաջիեւը:

«ՓԱՐԻԶԸ ՉԳՏՈՒՄ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԵՐԵՎԱՆԸ». ԶԱԽԱՐՈՎԱ

Փարիզն առաջնորդվում է ոչ թե Հայաստանի եւ նրա ժողովրդի շահերով, այլ ձգտում է Երեւանն օգտագործել որպես գործիք՝ սեփական պատեհապաշտ նպատակներին հասնելու համար: Այդ մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովան Պետերբուրգյան միջազգային իրավական ֆորումում լրագրողների համար ամենշաբաթյա ճեպազրույցի ժամանակ՝ մեկնաբանելով Հայաստանի կողմից ֆրանսիական CAESAR ինքնագնաց հրետանային կայանքների գնման պայմանագիրը:

«Դա մի կողմից Փարիզի քաղաքականության մի մասն է՝ լինել ամենուր եւ միեւնույն ժամանակ պատասխանատվություն չկրել: Մյուս կողմից՝ եթե խոսենք Կովկասյան տարածաշրջանի մասին, ապա հասկանում ենք, որ կա խաղաղության ծրագիր, ճանապարհային քարտեզ՝ այնտեղ իրավիճակի կարգավորման, տնտեսական հումանիտար ծրագրի հնարավորության բացման, փոխադարձ համագործակցության նպատակով լոգիստիկա կառուցելու համար: Այդ ամենն ամրագրված է Երեւանի, Բաքվի եւ Մոսկվայի միջեւ ձեռք բերված համաձայնագրերում: Մոսկվան հանդես է գալիս ազնիվ, բաց միջնորդի դերում, ինչն էլ կատաղի խանդ է առաջացնում Արեւմուտքում, որն այդ տարածքը համարում է իր շահերի գոտին եւ, չհասնելով որեւէ արդյունքի, հերթական քաոսն է նախապատրաստում, հնարավոր է, որ դա դիտարկի որպես հատուցում խաղաղասիրական ջանքերին, որոնք գործադրել է Ռուսաստանը, որոնք արդյունք են տվել եւ ուրվագծել բազմամյա փակուղուց դուրս գալու ուղին», - ասել է Զախարովան:

Ըստ ՌԴ ԱԳՆ ներկայացուցչի՝ նրանք, ովքեր նման առաջարկներ են բերում տարածաշրջան, ինչպես Փարիզը, վատ խորհրդատուներ են, նրանք գործը տանում են դեպի աղետ:

«Մենք լսում ենք հակամարտությունների վերսկսման ներուժի հռետորաբանություն, եւ այդ ամենն ասում են ֆրանսիացի պաշտոնյաները», - նշել է Զախարովան:

ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԻԻՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացահայտվել են ԻԻՀ քաղաքացու կողմից խարդախության եղանակով բազմաթիվ անձանցից առանձնապես խոշոր չափերով՝ տարբեր արժույթներով ընդհանուր 112.392.966 ՀՀ դրամ գումար հափշտակելու նոր դրվագներ, որոնց վերաբերող քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Այդ մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ ԻԻՀ քաղաքացին, Կանադայի վիզա տրամադրելու պատրվակով անձանցից գումարներ հափշտակելու համար Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմինների կողմից գտնվելով հետախուզման մեջ, 2019 թվականի նոյեմբերի 16-ին ժամանել է Հայաստան:

Նպատակադրվելով նույն եղանակով Հայաստանի Հանրապետությունում հափշտակություն կատարել՝ մի քանի օր անց՝ նոյեմբերի 21-ին, անձանց մոտ վստահություն ստեղծելու եւ մոլորության մեջ գցելու նպատակով, միգրացիոն խորհրդատվություն եւ տուրիստական, ճանապարհորդական ծառայություններ մատուցելու պատրվակով հիմնադրել է «Ամերիկան Հոմ Էդուքեյշն Քոլեջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Սկզբնական շրջանում չկարողանալով հավաքագրել հաճախորդների՝ հիշյալ անձը 2021թ. գարնանը ընկերությունում աշխատանքի է ընդունել մի քաղաքացու, ում հանձնարարել է հիշյալ ընկերության մտացածին գործունեության վերաբերյալ «Ֆեյսբուք» եւ «Ինստագրամ» սոցիալական կայքերում վճարովի գովազդներ տեղադրել: Արդյունքում՝ 2021թ. մայիսի 10-ից մինչեւ 2022թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում հիշյալ գրասենյակ է այցելել ՀՀ քաղաքացի 70 անձ:

ԻԻՀ քաղաքացին, ներկայանալով իբրեւ Մեծ Բրիտանիայի Թագավորությունում մեծ համբավ ունեցող, միգրացիոն փաստաբան-խորհրդատու Սոհրաբ Սադեղի անվամբ, իբրեւ թե ԱՄՆ դեսպանատան աշխատակից, ԱՄՆ եւ Կանադայի դեսպանատների հետ համագործակցող անձ՝ ԱՄՆ եւ Կանադա մեկնելու համար վիզաներ ձեւակերպելու կեղծ պատրվակով հիշյալ քաղաքացիներից խարդախության եղանակով ստացել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 112.392.966 ՀՀ դրամ գումարի տարբեր արժույթներ եւ հափշտակել:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա ԻԻՀ քաղաքացուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Նույն անձի կողմից նույն սխեմայով կատարված խարդախությամբ 86 այլ քաղաքացիներից ընդհանուր շուրջ 157մլն դրամի չափով հափշտակություն կատարելու վերաբերյալ գործը, մեղադրական եզրակացությամբ, ավելի վաղ՝ 2022թ. դեկտեմբերին, ուղարկվել էր դատարան», - նշված է հաղորդագրության մեջ:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ ՀՀ ԱՆ-ԻՆ

ՌԴ-ում ցմահ ազատազրկվածի հարազատները դատի են տվել արդարադատության նախարարությանը՝ պահանջելով, որ Ռուսաստանի Դաշնությունում պատիժը կրող դատապարտյալ Գեղամ Ամիրի Անայանին (ծնված՝ 08.02.1987թ.) փոխանցեն Հայաստանի Հանրապետությանը՝ պատժի մնացած մասը այստեղ կրելու նպատակով:

2010 թվականին մամուլը գրել էր, որ Ռուսական լրատվամիջոցների տեղեկացմամբ՝ Ռուսաստանի Պերմ քաղաքում 23-ամյա հայաստանցի Գեղամ Անայանը դատապարտվել է ցմահ ազատազրկման: Նա մեղավոր է ճանաչվել «երկու եւ ավելի անձանց կանխամտածված, շահադիտական նպատակներով սպանության եւ կողոպուտի, մեքենայություններրի» համար: Քննության տվյալներով՝ 2007 թ.-ին Անայանը կապեր է հաստատել տուժած ընտանիքի՝ 20-ամյա երիտասարդի, նրա մոր եւ քրոջ հետ, որոնք զբաղվում էին ձեռնարկատիրական գործունեությամբ: Որոշելով կորզել նրանց գումարները՝ նա առաջարկել է զբաղվել համատեղ բիզնեսով եւ միասին 220 հազարական ռուբլի դնել գործի մեջ: Ստանալով նրանց փողերը՝ Անայանը որոշել է սպանել ընտանիքին: Նախ հանցագործն անտառ է տարել եւ սպանել երիտասարդին, ապա երկու կանանց, որոնց նա սպանել է հրացանով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Երեւան քաղաքի դատարանը ծանուցում է ուղարկել ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, ինչպես նաեւ Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանին, որ հուլիս 10-ին ներկայանան կենտրոնի դատարան, հարգելի պատճառով չներկայանալու դեպքում՝ նրանց բերման կենթարկեն:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւան քաղաքի դատարանը ծանուցում է ուղարկելու ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, ինչպես նաեւ Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանին, որպեսզի վերջիններս ներկայանան դատարան ու հարցաքննվեն:

Իսկ ի՞նչ քրեական վարույթով նրանք պետք է ներկայանան դատարան:

2023 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԱԾ է հրավիրվել եւ հարցաքննվել ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ նրան ԱԱԾ էին հրավիրել ու հարցաքննել Արցախի պաշտպանության բանակի պահեստազորի գնդապետ, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմում անվտանգության վարչության պետի տեղակալ գնդապետ Նորայր Ասլանյանի դեմ հարուցված քրեական գործով:

Ի դեպ, մեզ հայտնի դարձավ, որ Հրանտ Մարգարյանի եւ կալանքի տակ գտնվող Արցախի գնդապետ Նորայր Ասլանյանի ցուցմունքների մեջ հակասություններ են եղել, ինչը ենթադրում էր, որ Հրանտ Մարգարյանն ու Նորայր Ասլանյանը պետք է առերեսվեին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր նաեւ, որ նույն քրեական գործով Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանը եւս հրավիրվել էր ՀՀ ազգային անվտանգության ծառայություն եւ հարցաքննվել էր: Հավելենք, որ Ասլանյանին մեղադրում են հրազենի եւ ռազմամթերքի ենթադրյալ ապօրինի շրջանառության մեջ»:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԿԱԾԱՌՔ

ՓՈՐՁԵԼ Է ՄԻՋՆՈՐԴ ԼԻՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Գագիկ Գառնիկի Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա կատարել է կաշառքի միջնորդության պատրվակով դրամական միջոց ստանալու փորձ, ինչպես նաեւ կաշառք տալու փորձի դրդչություն: Լոռու մարզի Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի բնակչուհի Մերի Ռուբիկի Կարոյանը, աշխատանք չունենալու պատճառով, 2024 թվականի ապրիլ ամսվա սկզբին՝ քննությամբ չպարզված օրը, դիմել է իր ծանոթ՝ Լոռու մարզպետարանի նախկին աշխատակից Գարիկ Գառնիկի Ղուկասյանին՝ իրեն աշխատանքի տեղավորելու խնդրանքով: 2024 թվականի ապրիլի 20-ին Գարիկ Գառնիկի Ղուկասյանը նշված հարցի կապակցությամբ «WhatsApp» բջջային հավելվածի միջոցով Մերի Կարոյանի հետ ունեցած գրագրության ընթացքում վերջինիս տեղեկացրել է, որ իրեն «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում որպես մատենավար աշխատանքի ընդունելու հարցի կապակցությամբ նշված բժշկական կենտրոնի իրավասու պաշտոնատար անձի հետ ձեռք է բերել պայմանավորվածություն, եւ նշված աշխատանքին ընդունելու նպատակով, նույն օրը, իբրեւ թե որպես կաշառքի միջնորդ, Մերի Կարոյանից պահանջել է 500 ԱՄՆ դոլարին համարժեք՝ 196.300 ՀՀ դրամ: Այնուհետեւ, 2024 թվականի ապրիլի 21-ին Գարիկ Ղուկասյանը Մերի Կարոյանից պահանջել է իրեն անմիջապես տրամադրել աշխատանքի ընդունվելու համար առանձին փաստաթղթեր, ինչպես նաեւ իր կողմից նախապես պահանջված կաշառքի գումարի մի մասը՝ 20.000 ՀՀ դրամ՝ գումարի մյուս մասը հաջորդ չորեքշաբթի օրն իրեն փոխանցելու պայմանով:

Իր հերթին, Մերի Կարոյանը, Գարիկ Ղուկասյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, խոստացել է փոխանցել վերջինիս կողմից պահանջված գումարը, սակայն, ցանկանալով հավաստիանալ, որ Գարիկ Ղուկասյանի հաղորդած տվյալները համապատասխանում են իրականությանը՝ իր ապագա աշխատանքի պայմաններին ծանոթանալու նպատակով վերջինիս հետ այցելել է «Վանաձորի բժշական կենտրոն» ՓԲԸ, որի արդյունքում Մերի Կարոյանը, գիտակցելով, որ Գարիկ Ղուկասյանն իրեն խաբում է եւ իրեն աշխատանքի տեղավորելու նպատակով «Վանաձորի բժշական կենտրոն» ՓԲԸ իրավասու որեւէ պաշտոնատար անձի հետ որեւէ պայմանավորվածություն ձեռք չի բերել, հրաժարվել է կաշառքի միջնորդության պատրվակով իրենից պահանջված վերոնշյալ գումարը փոխանցել Գարիկ Ղուկասյանին, ինչի արդյունքում վերջինիս դիտավորության մեջ ընդգրկված վերոնշյալ հանցագործությանը իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցվել:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 26-ից 27-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 80 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ՝ ՔՈՐԱՆՈ՞Ց

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե ե՞րբ է շահագործման հանձնվելու Կիրանցի դպրոցի նոր շենքը: Մարզպետարանից պատասխանել են. «Կիրանցի միջնակարգ դպրոցի շենքի շինարարական աշխատանքները սկսված են եւ նախատեսվում է շահագործման հանձնել սեպտեմբերի 1-ին:» Կիրանցի դպրոցի նոր շենքը ադրբեջանցի ահմանապահներից մոտ 50 մետր հեռավորությամբ է գտնվելու: Այդ շենքի շինարարության համար պետբյուջեից ծախսվել է 615 միլիոն դրամ: Կիրանցի ծնողները դեմ են, որ իրենց երեխաները հաճախեն նոր ձեւավորված, սահմանին այդքան մոտ գտնվող դպրոց: Կիրանց գյուղից հայտնեցին, որ նորակառույց դպրոցի շենքը ծառայելու է որպես սահմանապահների զորանոց: Իսկ թե ինչպես է լուծվելու դպրոցի շենքի հարցը, հայտնի չէ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ԲՐԴՈՒՃՆ ԵՆ ՍԱՐՔԵԼՈՒ

Տավուշի մարզպետարանի ֆեյսբուքյան էջը հայտնում է, որ հունիսի 29 -ին Ենոքավանում տեղի կունենա ավանդական դարձած «ՀայԲույս» փառատոնը: Ենոքավանը Նիկոլ Փաշինյանի պապական գյուղն է: Մարզպետարանը հայտնում է, որ «ՀայԲույս» Փառատոնի նպատակն է ժողովրդականացնել հայկական բուսականությունը եւ դրա կիրառությունը կյանքի տարբեր ոլորտներում՝ կենցաղ, բժշկություն, մշակույթ, արվեստ, ճարտարապետություն եւ այլն: Միաժամանակ այն ձգտում է հատկապես Տավուշի գյուղական եւ սահմանամերձ համայնքներում կրթել մարդկանց եւ հզորացնել նրանց բնապահպանական գիտելիքները, ստեղծել հաղորդակցության եւ համագործակցության բարենպաստ պայմաններ՝ խթանելով տարածաշրջանի զարգացումը: Փառատոնի ընթացքում մասնակիցները պատրաստելու են խաղաղության ամենամեծ բրդուճը՝ լավաշից, հայկական բույսերից եւ պանրի տարբեր տեսակներից: Նիկոլ Փաշինյանը միակողմանի կերպով, ապօրինաբար Ադրբեջանին է հանձնել ռազմավարական նշանակություն ունեցող Հայաստան-Վրաստան ավտոճանապարհը վերահսկող սահմանային դիրքերը Կիրանցում, Ներքին Ոսկեպարում (Աշաղի Ասքիպարա), Բաղանիս-Այրումում, իսկ նրա պապական գյուղ Ենոքավանում պատրաստելու են խաղաղության ամենաերկար բրդուճը: Ադրբեջանի ՊՆ-ն կեղծ հաղորդագրություններ է տարածում Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքի գնդակոծությունների մասին, Իլհամ Ալիեւը Հայաստանին նոր պահանջներ է առաջադրում ու սպառնալիքներ հնչեցնում, Ադրբեջանի նոր ագրեսիայի վտանգն օդում կախված է, այդ պայմաններում խաղաղության ամենաերկար բրդուճ սարքելու համար առնվազն բույս՝ քոլ պետք է լինել...:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԻՃԱՐԿՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՄԴ-Ն ՔՆՆՈՒԹՅԱՆ Է ԸՆԴՈՒՆԵԼ ՄԻՊ-Ի ԴԻՄՈՒՄԸ

Սահմանադրական դատարանը քննության է ընդունել Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը, որով վիճարկվում է կանանց՝ տարիքով պայմանավորված, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի օրենսդրական սահմանափակումը:

Դիմումով բարձրացվում է «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» ՀՕ-474-Ն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ, 30-րդ, 31-րդ, 78-րդ եւ 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Վիճարկվող դրույթները վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների (արհեստական սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով, արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով եւ սաղմի ներպատվաստում, ինչպես նաեւ դոնորական սաղմի ներպատվաստում փոխնակ մոր արգանդում) կիրառման առնչությամբ սահմանում են բացարձակ արգելք՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող 53 տարին լրացած, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող 53 տարին լրացած կանանց համար:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի՝ նշված կարգավորումները խնդրահարույց են խտրականության արգելքի սկզբունքի, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի եւ այդ համատեքստում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի տեսանկյունից՝նկատի ունենալով այն, որ ոչ իրավաչափ եղանակով միջամտում են անձի վերարտադրողական ինքնավարության, ներառյալ՝ երեխա ունենալու կամ չունենալու որոշումների կայացմանը, տարբերակված մոտեցում է ցուցաբերվում ինչպես սեռի, այնպես էլ տարիքի հիմքով:

Ըստ Պաշտպանի՝ օրենսդրական նման սահմանափակումները հակասում են վերարտադրողական իրավունքի իրացման համատեքստում Եվրոպական դատարանի այն տրամաբանությանը, որ ընդհանուր արգելքը՝ ծառայությունների հասանելիությունից օգտվելու համար, առանց անհատական հանգամանքները հաշվի առնելու, համաչափ չէ: Ավելին՝ դրանք չեն բխում Կառավարության՝ իր առջեւ դրված վերարտադրողականության ու ծնելիության մակարդակի բարելավման նպատակից:

Այսպիսով՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգել է, որ վիճարկվող իրավանորմերը, նախատեսելով կանանց համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար տարիքային սահմանափակում, հակասում են Սահմանադրությամբ ամրագրված՝ խտրականության արգելքի սկզբունքին, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին եւ այդ համատեքստում՝ իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՉԻՆԱՐԵՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ՄԵԾԱՆՈՒՄ Է

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը մասնակցող երկրներում մեծանում է չինարեն սովորելու պահանջարկը:

Այդ մասին ասաց ՀԺՀ Կրթության նախարարության Լեզվի կրթության եւ համագործակցության կենտրոնի կուսկոմ. քարտուղարի տեղակալ տիկին Յու Թիենցին՝ ելույթ ունենալով «Հայաստան-Չինաստան մշակութային երկխոսություն» գիտաժողովին, որը անցկացվեց ՀՀ ԳԱԱ-ում:

«Հայ-չինական ավանդական բարեկամությունը գալիս է դարերի խորքից եւ հատկապես դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո, վերջին 32 տարիների ընթացքում, մենք դարձել ենք փոխվստահություն ներշնչող լավ ընկերներ եւ անկեղծ համագործակցություն իրականացնող լավ գործընկերներ: Եվ, համապատասխանաբար, Հայաստանում անդադար մեծանում է հետաքրքրությունը չինարենի նկատմամբ, «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը մասնակցող երկրներում մեծանում է չինարեն սովորելու պահանջարկը, բազմաթիվ հայ երիտասարդներ նախընտրում են սովորել չինարեն եւ ծանոթանալ չինական մշակույթին: Վերջերս Հայաստանում հիմնադրվել է չինարենի ուսուցիչների միությունը, որը վկայում է Հայաստանում չինարենի դասավանդման զարգացման մասին, հավատացած եմ, որ այդ միությունը մեծ ներդրում է ունենալու հումանիտար համագործակցության ոլորտում», - ասաց տիկին Յու Թիենցին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 8 ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ

Հայաստանի ներկայացուցիչները 2 ոսկե, 5 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ են նվաճել հունիսի 20-23-ն Ինդոնեզիայի Բալի քաղաքում անցկացված Կիրառական կենսաբանության միջազգային 4-րդ օլիմպիադայում (IABO): Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍ նախարարությունից:

Հատկանշական է՝ Հայաստանի 3 կրթօջախները ներկայացնող բոլոր 8 աշակերտներն արժանացել են մեդալների:

Հայաստանի թիմը ղեկավարել է «Քվանտ» վարժարանի կենսաբանության ուսուցիչ Վահագն Գեւորգյանը:

ՀՀ թիմի կազմում ոսկե մեդալներ են նվաճել «Քվանտ» վարժարանի 11-րդ դասարանի աշակերտ Արամ Քերոբյանն ու ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Մարիամ Գալստյանը: Արծաթե մեդալներ են նվաճել Քվանտ վարժարանի 11-րդ դասարանի աշակերտներ Արա Մելքոնյանը եւ Հրաչյա Սեւոյանը, «Քվանտ» վարժարանի 9-րդ դասարանի աշակերտ Անի Գեւորգյանը, ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Նանե Անանիկյանը եւ Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 10 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Էլեն Դանիելյանը: Բրոնզե մեդալ է նվաճել «Քվանտ» վարժարանի 10-րդ դասարանի աշակերտ Հայկ Հարությունյանը:

Մասնակիցները նախօրոք առցանց ձեւաչափով մասնակցել ու հաղթահարել էին նախնական երկու փուլերը եւ հնարավորություն ստացել մասնակցելու եզրափակիչ փուլին:

Եզրափակիչ փուլին ավելի քան 100 աշակերտներ են մասնակցել Հայաստանից, ԱՄՆ-ից, Բանգլադեշից, Ինդոնեզիայից, Թաիլանդից, Մալազիայից, Նեպալից եւ Ֆիլիպիններից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 1 մարդ զոհվել է, 5-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»-Ը ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐ Է ԹՈՂԱՐԿԵԼ

«Հայէկոնոմբանկ»-ը ս/թ հունիսի 14-ից հոկտեմբերի 31-ը հանդես է գալիս բաժնետոմսերի հրապարակային առաջարկով. թողարկվել է 373,135 սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 5,360 ՀՀ դրամ շուկայական (ձեռքբերման) արժեքով (անվանական արժեք՝ 2,080 ՀՀ դրամ), արժեթղթերի ընդհանուր ծավալը շուկայական արժեքով կազմում է 2,000,003,600 ՀՀ դրամ (անվանական արժեք՝ 776,120,800 ՀՀ դրամ):

Բաժնետոմսեր կարող են ձեռք բերել բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք Երեւան քաղաքում եւ մարզերում գործող բանկի թվով 54 մասնաճյուղից:

Թեեւ ինչպես ցանկացած ֆինանսական գործիք, բաժնետոմսերի ձեռքբերումը ենթադրում է նաեւ որոշակի ռիսկեր՝ պայմանավորված հաշվեկշռային (շուկայական) արժեքի փոփոխությամբ, սակայն նշված ռիսկը հասցված է նվազագույն մակարդակի՝ շնորհիվ բանկում ներդրված ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմների: Բացի այդ բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը անշեղորեն աճում է. վերջին 3 տարիներին (31.12.2020թ. համեմատ 31.12.2023թ.) բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը աճել է մոտ 40%-ով (հաշվարկված բաժնետոմսերի համադրելի* գներով), ինչն էլ զուգակցվում է շահաբաժինների ամենամյա վճարման քաղաքականությամբ՝ մեծապես կարեւորելով ինչպես բաժնետերերի պահանջները, այնպես էլ բանկի արդյունավետ զարգացումը, որը դարձյալ նպաստելու է բաժնետերերի շահերին: Բանկը շահաբաժիններ է վճարում իր բաժնետերերին արդեն 10-րդ տարին անընդմեջ: Այս ամենը խոսում է բաժնետոմսերի գրավչության մասին:

Բաժնետերերին հնարավորություն է ընձեռվում ոչ միայն ստանալ տարեկան շահաբաժին, այլեւ մասնակից դառնալ բանկի կառավարմանը՝ մաս կազմելով իրականացվող մի շարք նախագծերին: «Հայէկոնոմբանկ»-ի նկատմամբ ձեւավորված վստահության մասին է վկայում բաժնետերերի աճող քանակը, որոնց թիվը մոտենում է 7,000-ին:

«Հայէկոնոմբանկ»-ը, լինելով բանկային համակարգի կազմավորման ակունքներում, ավելի քան 30 տարիների ձեռք բերած փորձի շնորհիվ տարեցտարի ամրապնդում է իր դիրքերը շուկայում՝ ապահովելով ֆինանսական ցուցանիշների կայուն աճ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Լիլիան Սաֆար Սուլայմանս (Lilyan Safar Sulaiman), 19.04.2024 թվականին Երեւանի Հանրապետության հրապարակում կորցրել եմ անձնագիրս (Իրաքի Հանրապետության անձնագիր. A12638944): Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 44 880 195 հեռախոսահամարով:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵԱԶԲ-ն վերանայել է ԱՊՀ հինգ երկրների եւ Ղազախստանի մակրոտնտեսական կանխատեսումները: Հայաստանի ՀՆԱ-ի աճը 2024 թվականի վերջում ակնկալվում է, որ կդառնա 7,5 տոկոս: Այսպիսով, այն զիջելու է միայն Տաջիկստանին եւ միայն կես տոկոսով: 2025 թվականին աճը նախատեսված է 4,2 տոկոսի չափով:

Կանխատեսման թարմացված տարբերակի համաձայն՝ տարեվերջին երկրում գնաճը կկազմի 1,5 տոկոս՝ ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ պահանջարկի կայուն աճով: Միաժամանակ, ընդհանուր տարածաշրջանի (ԱՊՀ) համար այն կկազմի 5,8 տոկոս: Նվազագույն մակարդակը սպասվում է Հայաստանում, առավելագույնը՝ Ղազախստանում (8,3%):

Երկրում փոխարժեքը շարունակում է մնալ կայուն: Տարվա միջին հաշվով, Եվրասիական բանկի կանխատեսումներով, մեկ դոլարի դիմաց այն կկազմի 396 դրամ:

Հունիսի 3-ից 17-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ Կենտրոնական բանկը, ինչպես ակնկալում էինք, նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0,25 կետով: Այս քայլը պետք է նպաստի գնաճի հետագա արագացմանը եւ միջնաժամկետ հեռանկարում կարող է որոշակի ճնշում գործադրել փոխարժեքի վրա: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, կարգավորիչի գործողությունները մնում են բավականին պահպանողական: Իսկ Հայաստանի ՍԳԻ-ն երկար ժամանակ անց առաջին անգամ արձանագրել է տարեկան գնաճ (+0,3%):

Այս իրադարձությունների մասին ավելի մանրամասն.

-Հայաստանում սպառողական գների ինդեքսը մայիսին կազմել է 0,3%՝ գերազանցելով 0,5% գնանկման սպասումները: Հիմնական դրդապատճառը եղել է պարենային ապրանքների եւ զովացուցիչ ըմպելիքների գնանկման տեմպերի նվազումը, որոնք թեեւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 2%-ով, սակայն մեկ ամսվա ընթացքում թանկացել են 25%-ով: Տրանսպորտի ոլորտում գնաճային դինամիկան արագացել է (+10%) եւ շարունակվել ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի ապրանքների գծով, որոնք թանկացել են 6.3%-ով:

-Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրել է 0,25 կետով՝ մինչեւ 8,0%: Սա իններորդ նվազումն է 2023 թվականի հունիսից ի վեր եւ չորրորդը՝ 2024 թվականին: Կարգավորողի պահպանողականությունը կարող է կապված լինել անշարժ գույքի եւ հիփոթեքային վարկավորման շուկաների գերտաքացման ռիսկի հետ, որի մոլեգնությունը դեռեւս պահպանվում է՝ դատելով անուղղակի տվյալներից: Այսպես, հունվար-ապրիլին անշարժ գույքի շուկայում իրականացվել է 20988 գործարք, ինչը 21,4 տոկոսով ավելի է 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

-Երկրի ընդհանուր պետական պարտքը ապրիլի վերջին նվազել է 0,77%-ով՝ հասնելով 12,07 մլրդ դոլարի: Ընդհանուր պարտքի կառուցվածքում 6,34 մլրդ դոլար բաժին է ընկնում արտաքին պարտքին, որն ապրիլին նվազել է 1,38%-ով: Այնուամենայնիվ, լուրերը, ամենայն հավանականությամբ, էական ազդեցություն չեն ունենա ամբողջ երկրում շուկաների դինամիկայի վրա:

-Նույն ժամանակահատվածում վերամշակող արդյունաբերությունն ավելացրել է արտադրանքի ծավալը 40,7%-ով՝ հասնելով 675,98 մլրդ դրամի: Դրական դինամիկան Հայաստանում տնտեսական ակտիվության աճի աջակցող գործոն է: Առանձին-առանձին ապրիլին աճն ավելի էական է եղել՝ կազմելով 27%: Սակայն մարտի համեմատ արձանագրվել է աննշան նվազում՝ 14,1%-ով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11–ՐԴ Fastex Meetup

Fastex Meetup տեղեկատվական հանդիպումների շարքը շարունակվում է: Ս.թ. հունիսի 22-ին Պարոնյան 16/2 հասցեում գտնվող Հայաստանի բլոկչեյն էմբասիում տեղի է ունեցել 11-րդ Fastex Meetup-ը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Web3 հայեցակարգի զարգացման վերջին միտումները, անդրադարձ է կատարվել ոլորտը ձեւավորող նորամուծություններին:

Հանդիպման խոսնակ Արմեն Բաղդասարյանը, մասնավորապես, պատմել է Web3 համայնքի մասը դառնալու առավելությունների եւ ընձեռած հնարավորությունների մասին: Արմեն Բաղդասարյանի խոսքով՝նման ձեւաչափի հանդիպումները շատ կարեւոր են, քանի որ ձեւավորում են որակյալ կրիպտո համայնք, ինչն էլ իր հերթին նպաստում է ընդհանուր Web3-ի զարգացմանը:

Հանդիպման երկրորդ հատվածում ներկաները հնարավորություն են ունեցել ուղղելու իրենց հետաքրքրող հարցերը եւ մասնակցել պանելային քննարկմանը:

Fastex Meetup հանդիպումների շարքը շարունակական է: Fastex Armenia եւ ftnft.am պաշտոնական էջերին հետեւելով՝ հետաքրքրված անձինք կարող են տեղեկանալ հաջորդ այդպիսի հանդիպման մանրամասներին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՐԿԻՆ ՎԱՐԿ ԿՎԵՐՑՆԻ

Հունիսի 26-ին ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը եւ Զարգացման ֆրանսիական գործակալության Եվրասիայի տարածաշրջանային տնօրեն Մաթյո Վասյերը ստորագրել են «Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագիրը»՝ քաղաքականության վրա հիմնված վարկի տեսքով բյուջետային աջակցության ծրագրի ներքո 75 մլն եվրո վարկային միջոցների ստացման նպատակով: Ֆրանսիական կողմից վարկային համաձայնագիրը համաստորագրել է նաեւ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինին:

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը՝ հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը եւ կայունությունը ու ֆինանսական ոլորտի զարգացումը բարելավելու հարցում: Այն կազմված է երեք հիմնական բաղադրիչներից՝

1) հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարելավում,

2) պետական արժեթղթերի թողարկման եւ կառավարման շրջանակի ու փողի շուկաների ենթակառուցվածքի ամրապնդում,

3) ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման նոր գործիքների մշակում եւ առավել թափանցիկ կառավարման ապահովում:

Բյուջետային ֆինանսավորումը հանդիսանում է բազմամյա ծրագրի մաս, որն իրականացվում է Ասիական զարգացման բանկի հետ համատեղ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

3000 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ԴԺՈԽՔԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ» ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Ացտեկների ասծուն նվիրված հնագույն՝ 3000-ամյա «դժոխքի դարպասների» առեղծվածը բացահայտվել է, երբ այն գողացել են գաղտնի քարանձավից. գրում է բրիտանական The Sun դարբերականը:

Մեքսիկական արտեֆակտը, որը, ինչպես պարզվեց, օլմեկների հնագույն քաղաքակրթությունից պահպանված քարանձավային դիմակ է, գողացվել է 1960-ականների սկզբին, սակայն 64 տարվա որոնումներից հետո այն ի վերջո վերադարձվել է Մեքսիկա:

Շուրջ 3000-ամյա հսկայական արտեֆակտը պատկերում է Թեպեյոլլոտլիկուտի ուռած ռունգերով եւ խորաբաց երախով օվալաձեւ խոշորաչյա յագուարաստծուն:

Իշխանությունները պարզել են, որ արտեֆակտը գողացվել էր դեռ մայիսին՝ դրա անհետացման շուրջ տարիներ տեւած խառնաշփոթությունից եւ թյուրըմբռնումից հետո:

Սակայն Մանհեթենի դատախազների եւ ազգային անվտանգության ծառայության համատեղ հետաքննությունից հետո այն անցյալ ամիս առգրավվել է:

Առայժմ պարզ չէ՝ քանդակի անհետացման առնչությամբ որեւէ մեկ կենթարկվի՞ քրեական պատասխանատվության:

Մանհեթենի շրջանային դատախազ Էլվին Բրեգ կրտսերը հայտնել է, որ դիմակը մ.թ.ա. 800 թվականին Մեքսիկայում պատրաստված չափազանց հազվագյուտ նմուշ է: «Դեպի հանդերձյալ աշխարհ անցումը խորհրդանշող օլմեկների փոքրագրված հսկայական դիմակը պահպանում էր Մեքսիկայի Չալկացինգո հնագիտական պեղումնավայրի ծիսակարգային քարանձավի մուտքը: Այս անհավանական, հնագույն իրը օլմեկների հասարակության անցյալը բացող հազվագյուտ պատուհան է», - նշել է Բրեգը: Շրջանային դատախազը պատմում է, որ հնագույն դիմակը գողերն ի վերջո փշրել ու բաժանել են մի քանի մասի՝ դրա տեղափոխումը հեշտացնելու նպատակով: Արդյունքում՝ դիմակը շուրջ 60 տարվա ընթացքում մաս-մաս ցրվել է ԱՄՆ-ով մեկ՝ տեղ գրավելով տարբեր թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում: Քննիչները պարզել են, որ Նյու Յորքի հանրահայտ Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը բազմաթիվ թանգարաններից մեկն է, որին հանձնվել է դիմակը: Փաստաթղթերում նշվում է նաեւ, որ դիմակը վերջերս վաճառվել է մասնավոր հավաքորդի՝ նախքան այն վերադարձվելը: Քանդակը, որը Մեքսիկայի բնակիչներին հայտնի է որպես «Անդրշիրիմյան պորտալ», օլմեկների քաղաքակրթությանն առնչվող նմուշ է:

Հետագա տարիներին տարածաշրջանում ի հայտ եկած շատ այլ մշակույթների «մայր մշակույթը» համարվող օլմեկների արվեստը հինավուրց Ամերիկայի ամենավառ նմուշներից է:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԿԱՐՄԻՐ ԳՈՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԻՑ

Երեւանում հուլիսի 7-14-ը կայանալիք «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն այս տարի չի ունենա բացման արարողության ավանդական կարմիր գորգը: Ըստ փառատոնի ստեղծագործական թիմի՝ արարողակարգային այս կարեւոր դետալը հետայսու կկրի լրացուցիչ իմաստավորում: «Ոսկե ծիրան» 21-րդ փառատոնի կարմիր գորգին կփոխարինեն արվեստագետ Դավիթ Քոչունցի դիզայնի հիման վրա տեղացի գորգագործ վարպետների ձեռքերով պատրաստած գորգերը, որոնք կազմում են «Տեղորոշում» («Point of Reference») հավաքածուն:

Փառատոնի այս փոփոխությանն ընդառաջ ARARAT թանգարանը «Ոսկե ծիրան» կինոփառատոնի եւ AHA Collective հետ համատեղ կազմակերպել է Դավիթ Քոչունցի գորգագործական այլ աշխատանքների ցուցադրություն, որը համադրել է Նաիրի Խաչատուրեանը:

«Համարձակ խնձորեսկ» վերտառությամբ այս ցուցադրությունը պատմում է հայկական ձեռագործ աշխատանքի՝ վարպետության ամենահին եզրերից մեկի՝ գորգագործության ավանդույթների մասին՝ դիտարկելով դրանք տեղային, ճարտարապետական եւ բնության համատեքստում: Ցուցադրության առանձնահատուկ մաս են կազմում Փիրուզա Խալափյանի լուսանկարները, որտեղ գորգերը ներկայացված են հայկական վանքերի եւ ժայռերի անսպասելի ու տպավորիչ վայրերում: Ցուցադրությունը կգործի մինչեւ օգոստոսի 1-ը: Մուտքն ազատ է:

«Կարմիր գորգի չեղարկումն ունի մի քանի պատճառ. օրինակ՝ տարիների ընթացքում արմատացած կարմիր գորգի հետ ասոցացվող էլիտիստականությունը, որը հակասում է փառատոնի հակաէլիտիստական բովանդակությանը: Մյուսը՝ հաշվի առնելով հայկական գորգագործական հարուստ ավանդույթները եւ ժամանակակից տաղանդաշատ դիզայներների ու նկարիչների ներուժը, շատ ավելի իմաստավորված ու հմայիչ կլինի, եթե փառատոնային պաստառի նման, յուրաքանչյուր տարի լինի հատուկ գորգ՝ ստեղծված ժամանակակից տեսողական լուծումներով եւ գործված՝ ավանդական տնայնագործ կանանց կողմից»,- նշել է փառատոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանը:

ՀԱՄԵՐԳ ՈՒՐՈՒԳՎԱՅՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Ուրուգվայի ամենահեղինակավոր համերգասրահում՝ Սոլիս թատրոնում, տեղի է ունեցել աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված համերգ, որի շրջանակներում ելույթով հանդես է եկել ՀՀ վաստակավոր արտիստ, անվանի դաշնակահար Հայկ Մելիքյանը:

Այս մասին նշված է Ուրուգվայում Հայաստանի Հանրապետության դեսպանության տարածած հաղորդագրության մեջ:

Դեսպանությունը նշել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ կայացած այս համերգի ընթացքում Հայկ Մելիքյանը՝ Մոնտեվիդեոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ եւ դիրիժոր Ալվարո Հակոբյանի ղեկավարությամբ, ներկայացրել է Արամ Խաչատրյանի հանրահայտ դաշնամուրային կոնցերտը: Երեկոյի ընթացքում Մոնտեվիդեոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ հնչել են նաեւ Արամ Խաչատրյանի հանրահայտ այլ ստեղծագործություններ, այդ թվում՝ «Դիմակահանդես»-ի վալսը, «Զանգեզուրի քայլերգը», «Գայանե» բալետից հատվածներ եւ այլն:

ՀՀ դեսպանության հրավերով՝ համերգին ներկա են գտնվել նաեւ Ուրուգվայի արտաքին հարաբերությունների նախարարության եւ այլ պետական գերատեսչությունների աշխատակիցներ, երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Համերգին հետեւած ընդունելության ընթացքում դեսպան Մարիամ Գեւորգյանը շնորհակալագրերով է պարգեւատրել դաշնակահար Հայկ Մելիքյանին եւ դիրիժոր Ալվարո Հակոբյանին՝ Արամ Խաչատրյանի երաժշտական ժառանգությունն Ուրուգվայում լավագույնս ներկայացնելու համար:

Դեսպանության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ այս բացառիկ համերգի շրջանակներում ՀՀ դեսպանությունը՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի հետ համագործակցությամբ, Սոլիս թատրոնում ներկայացրեց նաեւ Արամ Խաչատրյանի՝ 1957 թ. Ուրուգվայ կատարած այցի լուսանկարների ցուցահանդես:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿԸ ԱԶԱՏՎԵՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Կառավարությունն իր երեկվա նիստում որոշեց ծանրամարտի ազգային հավաքականի անդամ Արսեն Մարտիրոսյանին ազատել պարտադիր զինծառայությունից:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ ծանրամարտի ազգային հավաքականի անդամ, Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիր, ՀՀ միջազգային կարգի սպորտի վարպետ Արսեն Գեւորգի Մարտիրոսյանին պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում է տրվել մինչեւ 2024-ի ամառային զորակոչը: Տարկետումը տրամադրվելուց հետո՝նոր նվաճումներ է ունեցել՝ այդ թվում՝ ծանրամարտի Եվրոպայի 2022-ի առաջնության 3-րդ մրցանակակիր է դարձել:

Այժմ անհրաժեշտություն է առաջացել պարտադիր զինծառայությունից ազատել Արսեն Մարտիրոսյանին:

162 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Լոս Անջելես Լեյքերսի» բասկետբոլիստ Լեբրոն Ջեյմսը կարող է նոր պայմանագիր ստորագրել թիմի հետ, հայտնում է Mundo Deportivo-ն:

Ակումբի ղեկավարությունը պատրաստ է ամեն ինչ անել, որպեսզի պահի իր առաջատարին: Դրա համար «Լոս Անջելես Լեյքերսն» 39-ամյա հարձակվողին պատրաստ է 3 տարվա պայմանագիր առաջարկել: Համաձայնության դեպքում՝ ամերիկացին կստանա 162 միլիոն դոլար:

Ջեյմսի գործող պայմանագիրն ավարտվում է հունիսի 29-ին, եթե նա երկարաձգի պայմանագիրը, ապա ստիպված կլինի խաղալ մինչեւ 42 տարեկանը:

«Լոս Անջելես Լեյքերսը» պատրաստ է անգամ դրաֆթի ժամանակ իրականացնել Բրոնի Ջեյմսի գործարքը, որպեսզի NBA-ի պատմության լավագույն ռմբարկուն հնարավորություն ունենա խաղալու որդու հետ:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԲՈԼՈՐ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

Ավարտվեց ֆուտբոլի Եվրոպայի առաջնության խմբային փուլը:

Գերմանական 10 քաղաքներում ընթացող ֆուտբոլի Եվրոպայի առաջնության խմբային փուլի արգելքը հաղթահարեցին 16 թիմերը:

Փլեյ-օֆֆում միմյանց դեմ կմրցեն հետեւյալ զույգերը՝

Շվեյցարիա-Իտալիա
Գերմանիա-Դանիա
Անգլիա-Սլովակիա
Իսպանիա-Վրաստան
Ֆրանսիա-Բելգիա
Պորտուգալիա-Սլովենիա
Ռումինիա-Նիդերլանդներ
Ավստրիա-Թուրքիա

1/8 եզրափակիչի հանդիպումները կմեկնարկեն հունիսի 29-ից:

● *Հուլիսի 6-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Սիրո խոստովանություն» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞r դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:

Հայկ Գաբրիելյան (41 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

ՀՀ փաստաբանների պալատ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար եւ իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչեւ երեքամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞r ունեն մասնակի կենսաթոշակի իրավունք:

Արփինե Ստեփանյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնակի կենսաթոշակ նշանակվում է՝

1) կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին, եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

2) թատերական եւ թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին, եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

ՀՀ սոցիալական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1-ին եւ 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (ունեցել են առնվազն 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ), եւ լրացել է նրանց՝ սույն հոդվածով սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի Մ17 տարեկանների հավաքականը 1 ոսկե, 3 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ է նվաճել Սերբիայի Նովի Սադ քաղաքում անցկացված Եվրոպայի առաջնությունում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +25 + 29
Կոտայքի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 19+ 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7+ 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14+ 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18+ 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 22 + 24 + 32 + 34

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.6.2024**
Հասցեն՝ Գերաբերունիքի փող. 2, Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*